

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021 թվականի հուլիսի 1-31-ն ընկած ժամանակահատվածում Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի և զբաղվածության վարչության կատարած աշխատանքների վերաբերյալ

1. ՀՀ արդարադատության նախարարության պետական-իրավական փորձաքննության է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

2. Մշակվել և շահագրգիռ մարմիններ կարծիքի է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

3. Ներկայացվել են առաջարկություններ ՀՀ կառավարության մշակվող նոր ծրագրում և ծրագրից բխող 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի նախագծում ներառելու նպատակով:

4. Լրամշակվել և ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 12-ի N 486-Ն և N 493-Ն որոշումներում փոփոխություններ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի N 534-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

5. Լրամշակվել և ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Ռեզիդենտական գործողությունների հետևանքով վնասվածք (վիրավորում) ստացած և հաշմանդամություն ունեցող անձ ճանաչված նախկին զինծառայողներին (նրանց հավասարեցված անձանց) աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին պետական աջակցության տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

6. Լրամշակվել և ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի N 534-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

7. Լրամշակվել և ամփոփ վերլուծությունների, մոնիթորինգի և գնահատման վարչության է ներկայացվել աշխատանքի և զբաղվածության ոլորտի 2022-2024 թթ. ՄԺԾԾ հայտի, ներառյալ՝ 2022 թվականի բյուջեի նախագիծը:

8. Ուսումնասիրվել և ներկայացվել է կարծիք կամ առաջարկություններ՝

- «Կրթության պետական վերահսկողության մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի վերաբերյալ,

- «Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի փետրվարի 1-ի N 201-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ,

- «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 375-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ,

- «ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի 1691-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին որոշման» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ,

- «Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի ապրիլի 30-ի N 718-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ,

- «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1691-Ն որոշման մեջ փոփոխություններ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի N 1301-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 375-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման լրամշակված նախագծի վերաբերյալ,

- «ՀՀ կառավարության 23.06.2017 թիվ 725-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ,

- «Հանրային կառավարման բարեփոխումների մինչև 2030 թվականի ռազմավարության փաթեթը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ,

- Միավորված ազգերի կազմակերպության Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի 9-րդ հոդվածի համաձայն ներկայացված Հայաստանի Հանրապետության 12-14-րդ համատեղ պարբերական զեկույցի նախագծի վերաբերյալ,

- Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի նախագծային հիմնադրամի 2022-2024 թթ. ռազմավարության նախագծի վերաբերյալ հարցաշարի 28-րդ կետի վերաբերյալ,

- ՀՀ կառավարության և Եվրոպական հանձնաժողովի միջև 2021թ. տարեկան գործողությունների ծրագրի շրջանակում նախատեսվող «EU Green Resilience Facility for Armenia» ֆինանսավորման համաձայնագրի նախագծի վերաբերյալ:

9. Ներկայացվել է տեղեկատվություն (տեղեկանք)՝

- ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի ներքո գործող Առևտրի հարցերով Գործընկերության կոմիտեի երրորդ նիստի շրջանակներում Կիրառական եզրահանգումներ»-ում թվարկված պարտավորությունների կատարման վերաբերյալ,

- «Աշխատիր, Հայաստան» ռազմավարությունը, դրա գործողությունների շրջանակը եվ ֆինանսական գնահատականը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված ծրագրում ներառված միջոցառումների ընթացքի վերաբերյալ,

- 2021 թվականին ԱՄԿ կենտրոնակայան ներկայացվող՝ «Արտադրական պատահարների դեպքում աշխատողներին փոխհատուցելու մասին» ԱՄԿ թիվ 17 կոնվենցիայի վերաբերյալ

10. Վարչության աշխատողները մասնակցել են՝

- «Մարդու իրավունքների հետազոտությունների կենտրոն» ՀԿ-ի կողմից կազմակերպված «Հղի և կրծքով կերակրող կանանց համար առողջ և անվտանգ աշխատանքային պայմանների ապահովման ՀՀ գործող համակարգի բացերն ու բարելավմանն ուղղված առաջարկները» թեմայով աշխատաժողովին,

- ԱՊՀ անդամ երկրների համար «Տնտեսական գործունեության տեսակների հաշվառմամբ՝ տասնութ տարեկանից ցածր տարիքի անձանց աշխատանքի օգտագործումն արգելող աշխատանքների տեսակների տիպային ցանկի մշակման առաջարկությունների» նախագծի մշակման աշխատանքային խմբի նիստին,

- Եվրասիական տնտեսական միության շրջանակներում աշխատանքային ռեսուրսների միասնական շուկայի զարգացման հարցերով ձևավորված աշխատանքային խմբի 2021 թ. հուլիսի 30-ին կայանալիք նիստին

- Ծաղկաձորում կազմակերպված «ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ընտրված զբաղվածության ծրագրերի գենդերային ազդեցության գնահատում» խորագրով աշխատաժողովին,

- «Էրեբունի Պլազա» բիզնես կենտրոնում կայացած Հայաստան վերադարձող ՀՀ քաղաքացիների վերաինտեգրման հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպությունների ֆորումի հերթական՝ տասներորդ, հանդիպմանը:

11. Ներկայացվել է եզրակացություն՝

- «Մասնագիտական կողմնորոշման համակարգի մեթոդաբանության ապահովման և կադրերի վերապատրաստման ծառայություններ» թեմայով միջոցառման շրջանակներում հունիս ամսին կատարած աշխատանքների հաշվետվության վերաբերյալ,

- «Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության հիմնախնդիրների ուսումնասիրություն, միջոցառումների փաթեթի մշակում, զբաղվածության ոլորտի նոր ծրագր(եր)ի մշակման աջակցություն» թեմայով միջոցառման շրջանակներում հունիս ամսին կատարած աշխատանքների հաշվետվության վերաբերյալ:

12. ԱՍՀՆ գլխավոր քարտուղարին է ներկայացվել հաշվետվություն՝ Վարչության իրավասության շրջանակներում 2021 թվականի հունիսի 1-30-ն ընկած ժամանակահատվածում ԱՍՀՆ պաշտոնական կայքէջում կատարված աշխատանքների

վերաբերյալ և իրականացրել՝ ԱՍՀՆ պաշտոնական կայքէջում աշխատանքի և զբաղվածության ոլորտին վերաբերող տեղեկատվության, այդ թվում՝ աշխատանքի և զբաղվածության ոլորտի օրենսդրության թարմացման, ինչպես նաև Վարչության ամենամսյա հաշվետվության և իրավական ակտերի նախագծերի տեղադրման ընթացիկ աշխատանքներ:

13. Իրականացվել է սոցիալական փաթեթի հատկացումն ապահովելու մասին ՀՀ բանկերի հետ կնքած պայմանագրերից բխող պարտավորությունների կատարման, այդ թվում՝ համապատասխան բանկերի ներկայացրած հաշվետվությունների մուտքագրման, տվյալների վերլուծության, ամփոփման ընթացիկ աշխատանքներ:

14. Տարբեր նախարարություններից, գերատեսչություններից, կազմակերպություններից և քաղաքացիներից ստացված գրությունների, դիմումների վերաբերյալ տրամադրել է գրավոր պարզաբանում: Ըստ անհրաժեշտության իրականացրել է քաղաքացիների ընդունելություն, տրամադրել՝ բանավոր պարզաբանում և խորհրդատվություն:

Աշխատանքի և զբաղվածության վարչություն